community

The New Apostolic Church around the world

01/2021/AM

Քրիստոսը- մեր ապագան

Խմբագրական՝
Քրիստոսը- մեր ապագան

Ժամերգություն՝
Ամեն ինչ պատրաստ է

Տեսություն՝
Մարդկային կյանքի սկիզբը

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Քրիստոսը- մեր ապագան

Ժամերգություն

4 Ամեն ինչ պատրաստ է

Այցելություն Ասիա

10 Գանձ, որը հասրտացնում է

Մանկական անկյուն

12 Պետրոսն ուրանում է Հիսուսին

14 Այցելություն Լինային՝ Օսլոյում / Նորվեգիա/

Տեսություն

16 Մարդկային կյանքի սկիզբը

■ Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Բերնհարդ Հոլդեների
■ Շապիկի ետևի լուսանակարը՝ ՆԱԵ Պակիստան

Քրիստոսը – մեր ապագան

Լուսանկարը՝ Միջազգային ԱՄԵ

Իմ սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

անցնող 2020 թվականը նշանավորվեց Կորոնայի համավարակով: Մի բան չկարողացավ մեզնից այդ ճգնաժամը վերցնել՝ Աստծո հանդեպ մեր վստահությունը: Կա և մնում է մեր երկնային Հայրը, ով բարին է մտածում իր զավակների համար:

Այս հավատը պետք է որոշի նաև մեր ապագան: Թեև մենք չգիտենք, թե ինչ է մեզ համար պատրաստել 2021 թվականը, մենք այն սկսում ենք հավատով, որ Հիսուսը շուտով գալու է: Դա մեր հավատի նպատակն է: Սրանից ելնելով էլ պետք է հնչի այս տարվա նշանաբանը՝

Քրիստոսը—մեր ապագան է

Քրիստոսը մեր ապագան է, քանի որ նա մեզ նվիրում է վստահություն, նրա մեջ ենք մենք գտնում այն էներգիան ու մոտիվացիան, որով մենք քայլում ենք մեր հավատի ճանապարհով: Ոչ կյանքի դժվարությունները, ոչ էլ մյուսների պահվածքը մեզ չպետք է վիատեցնեն: Մենք վճռականորեն ընդառաջ ենք գնում մեր նպատակին:

Քրիստոսը մեր ապագան է, քանի որ նա մեր փրկությունն է և ուզում է մեզ լիակատար ավարտին հասցնել: Դրա համար հիմք են հանդիսանում նրա մահն ու հարությունը: Նա գիտի, որ մենք կարող ենք նվաճել փրկությունը և պատրաստ է պահում այն ամենը, ինչը դրա համար անհրաժեշտ է: Տիրոջ խոստումը հաստատուն է, նա իր գործը հասցնելու է մինչև լիակատար ավարտ: Եթե մենք հավատարիմ մնանք նրան, կարող ենք հուսալ նրա ողորմածությունը: Եվ մենք կարող ենք համոզված լինել, որ նրա փառահեղությունը ճառագելու է մեր բոլոր ջանքերի վրա:

Քրիստոսը մեր ապագան է, քանի որ նա մեր ապագայի լուծումն է: Հիմա խոսքն այն մասին է, թե մենք ինչպես ենք ապրում, ինչպես ենք գործում, ինչպես ենք հավատում: Որպեսզի հավետ ապրենք Քրիստոսի մոտ, մենք պետք է արդեն այսօր միասնություն փնտրենք նրա հետ: Նրա Ավետարանը այն հիմնաքարն է, որի վրա մենք հիմնում ենք ամուսնությունը, ընտանիքը և մերձավորի հետ հարաբերությունը: Հիսուս Քրիստոսը այն օրինակն է, ում մենք պետք է նմանվել ուզենանք:

Նոր տարում ես ձեզ ցանկանում են խաղաղությամբ լի մտքեր ու ապրումներ: Թող Աստծո օրհնանքը ձեզ ուղեկցի ու Համբարձվածի խաղաղությունը ձեզ հետ լինի: Պահպանենք վստահությունը Հիսուս Քրիստոսի հանդեպ – մեր հոգևոր ապագան կախված է դրանից: Եթե մենք մեր հայացքը հաստատուն դեպի Հիսուսն ուղղենք, ապա կհասնենք մեր նպատակին:

Սրտագին ողջույններ

Ժան-Լյուք Շնայդեր

Շուրջ 500 հավատացյալ էր հավաքվել գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերի հետ ժամերգությանը՝ 2019-ի օգոստոսի 4-ին Սան Պաուլոյի /Բրազիլիա/ Փուլման հյուրանոցի Քաունթրի Հոլ կոչվող սրահում

Լուսանկարը՝ ՆԱԵ Բրազիլիա

Ամեն ինչ պատրաստ է

Ղուկաս 14,16,17

Եվ Հիսուս ասաց. ,, Մի մարդ ընթրիք սարքեց ու հրավիրեց շատերին: Եվ ընթրիքի ժամին իր ծառային ուղարկեց կանչելու հրավիրվածներին, թե՝ ,,Եկեք, որովհետև ամեն ինչ պատրաստ է,,:

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, մենք շնորհակալ ենք մեր երկնային Հորը, որ մեզ համար հնարավոր դարձրեց այսօր Սան Պաուլոյում այս տոնական ժամերգությունն ապրելը: Ես գիտեմ, որ սա ձեզ համար առանձնահատուկ օր է, որովհետև ձեր շրջանային առաքյալն անցնում է հանգստի և աշխատանքը ստանձնում է նոր շրջանային առաքյալը: Դա արդեն առանձնահատուկ է: Բայց, ամենից առաջ մենք այսօր ապրում ենք ժամերգություն: Այստեղ խոսքը ոչ միայն շրջանային առաքյալի փոփոխության մասին է, այլ խոսքը քո մասին է, քո և Աստծո հարաբերության մասին: Աստված հետաքրքրվում է քեզնով: Նա ուզում է քեզ ուժեղացնել: Նա ուզում է քեզ մխիթարել: Նա ուզում է քեզ նախապատրաստել Հիսուս Քրիստոսի գալստյանը: Այսօր դա ամենակարևորն է: Աստված

սիրում է քեզ, նա քեզ հետ նպատակ ունի դրած՝ ամեն ինչ պտտվում է քո և քո հոգու շուրջը:

Աստված ուզում է, որ մեր հարաբերություններն ու միասնությունը իր հետ ամրանան: Ապա, երկրորդը, իհարկե տեղի է ունենալու շրջանային առաքյալի փոփոխություն: Որպեսզի ավելի պատկերավոր արտահայտվեմ, ապա կասեմ, որ մենք Բրազիլիայի նորառաքելական եկեղեցու պատմության մեջ մի գլուխ ենք փակում և սկսում նոր գլուխ: Բայց մնում է նույն այցը: Միայն մեկ հատվածն է նոր:Նույն գործը, նույն պատմությունը, նույն Աստված, նույն նպատակը և նույն ճանապարհը, որով մենք կհաջողենք այնտեղ գնալը: Ուրեմն, ոչ մի մտահոգություն, ոչինչ չի փոխվելու: Մենք շարունակում ենք գնալ դեպի վեր:

Այս օրը նաև լավ հնարավորություն է հետին հայացք գցելու և շնորհակալություն հայտնելու երկնային Հորը այն օրհնության համար, որը մենք կարողացել ենք ապրել անցած տարիներին: Ես չեմ կարող այդ օրհնությունը քանակի վերածել, ես չգիտեմ նաև նրա ողջ չափաբաժինը: Բայց ես գիտեմ, որ Աստված օրհնել է այս երկիրը այն տարիների ընթացքում, երբ ձեր շրջանային առաքյալը աշխատել է այստեղ, և, որ դուք կարողացել եք այդ ժամանակահատվածում շատ արտակարգ բաներ ապրել: Ուրեմն, տեղին չէ՞ Աստծուն իր օրհնանքի համար շնորհակալություն հայտնելը:

Հիմա դառնանք աստվածաշնչյան մեր խոսքին: Այն վերցրված է Հիսուսի առակներից մեկից: Մի մարդ մի մեծ խնջույք է կազմակերպում – Մատթեոսի Ավետարանում նկարագրվում է որպես հարսանքի խնջույք- և շատերին է հրավիրում այդ խնջույքին: Նա իր ծառաներին ուղարկում է հյուրերի հետևից, որպեսզի նրանց հաղորդեն՝ Դուք կարող եք գալ, ամեն ինչ պատրաստ է: Բայց ոչ ոք չի գալիս:

Առաջինն ասաց . ,, Ագարակ գնեցի և պետք է, որ գնամ տեսնեմ, խնդրում եմ քեզ, ինձ հրաժարված համարիր,,: Եվ մյուսն ասաց. ,,Հինգ լուծ եզներ գնեցի, գնում եմ դրանք փորձելու, խնդրում եմ քեզ ինձ հրաժարված համարիր,,: Իսկ մյուսն ասաց .,, Կին եմ առել, դրա համար էլ չեմ կարող գալ,,: Եվ ծառան եկավ ու իր տիրոջը պատմեց այս: Այդ ժամանակ, բարկանալով, տանտերն իր ծառային ասաց .,, Իսկույն դուրս եկ քաղաքի հրապարակներն ու փողոցները և աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին բեր մտցրու այստեղ: Քիչ հետո տերը ծառային ասաց. ,, Դուրս եկ ճանապարհներն ու ցանկապատների առաջ և մարդկանց այստեղ մտցրու, որպեսզի տունս լցվի,, / Ղուկաս 14, 18-23/:

Խնջույքը Աստծո հետ միասնության պատկերն է: Հրեականության մեջ տոնական խնջույքը ավանդաբար եղել է Աստծո հետ մարդկանց միասնության, Աստծո արքայության մեջ ուտելու և խմելու պատկերը:

Աստված ունի իր ժողովուրդը, ընտրել է Իսրայելի ժողովրդին, որպեսզի նրա հետ միասնության մեջ լինի, և նա ուղարկել է իր Որդուն, իր ծառային, որպեսզի մարդկանց ասեն. ,, Եկեք, ամեն ինչ պատրաստ է,,: Սակայն, նրանք չեն ընդունել հրավերը, նրանք չեն հետևել Հիսուսին: Դրա համար էլ Աստված ասել է. ,, Այժմ փրկությունը պետք է բոլոր ժողովուրդներին առաջարկվի, ոչ միայն ընտրյալ ժողովրդին,,:

Այն պահից ի վեր, երբ Հիսուսը հաղթեց դժոխքին ու մահին և երկինք համբարձվեց, ամեն ինչ պատրաստ է:

Սա պատմական ֆոնն է, առակի նշանակությունը: Սակայն, այն նաև բարի լուր է պարունակում մեզ համար: Նաև մենք ենք ընտրված: Աստված մեզ ընտրել է որպես առաջնեկներ իր արքայությունը գնալու համար: Մենք հրավիրված ենք Գառան հարսանիքի խնջույքին / Հայտն. 19,9/: Դա է մեր ապագան: Իսկ այժմ Հիսուսն ասում է .,, Եկեք, քանի որ ամեն ինչ արդեն պատրաստ է,,:

Հիշեք այն խոսքերը, որոնք Հիսուսն ասել է իր աշակերտներին, երբ նա խոսում էր այն մասին, որ նա նրանց թողնելու է ու հեռանա. ,, Եվ եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի, ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք,, / Հովհաննես 14,3/: Դրանով նա տեղեկացնում է իր զոհաբերության մասին: Նա գնում է և տալիս իր կյանքը: Նա անում է իր զոհաբերությունը և հաղթում դժոխքին ու մահին: Դրանով նա պատրաստել է տեղեր: Նրա հաղթանակը հավերժական է և լիակատար: Այն պահից ի վեր, երբ Հիսուսը հաղթեց դժոխքին ու մահին և համբարձվեց երկինք, այնտեղ ամեն ինչ պատրաստ է, այնտեղ չպետք է այլևս ոչինչ արվի: Ոչ ոք չպետք է մտածի, թե արդյոք Հիսուսն արդեն տեղերը պատրաստել է, թե՝ ոչ: Ամեն ինչ արված է,

ամեն ինչ պատրաստ է, երկնքում այլևս Քրիստոսի գալստյան համար ոչինչ անել պետք չէ: Այնտեղ ամեն ինչ պատրաստ է:

Նաև այստեղ՝ երկրի վրա է ամեն ինչ պատրաստ, քանի որ Հիսուսն ուղարկել է Սուրբ Հոգուն, առաքյալներին, և Սուրբ Հոգու ներգործության և առաքելոց ծառայության միջոցով ամեն ինչ պատրաստ է: Այն, ինչը պահանջվում է Քրիստոսի հարսնացուին պատկանելու և Աստծո արքայություն գնալու համար, այստեղ՝ երկրի վրա մեզ տեղեկացվում է առաքելոց ծառայության միջոցով՝ վերստին ծնվելը ջրով ու Սուրբ Հոգով, Աստծո խոսքը, մեղքերի քավությունը և Սուրբ Հաղորդությունը – ամեն ինչ առկա է և առաջարկվում է բոլորին:

Ինչպես առակում է ասվում՝ ,, Խեղանդամները, կաղերնուկույրերը,,/Ղուկաս14,21/,բոլորը,ինչպիսի վիճակում էլ լինեն՝ աղքատ կամ հարուստ, կարող են ստանալ անհարժեշտը Աստծո արքայություն գնալու համար: Առաքելոց ծառայության միջոցով նրանք կարող են ստանալ խորհուրդները, ճաշակել խոսքն ու ողորմածությունը և ատանալ առաջնեկություն: Խոսքը վերաբերում է նաև մեր ժամանակներին՝ ամեն ինչ պատրաստ է Քրիստոսի գալստյան համար, երկնքում և երկրի վրա, մեզնից յուրաքանչյուրի համար, ինչպիսի իրավիճակներ էլ լինեն:

Ես գիտեմ, որ Հայտնության մեջ կա մի խոսք, որն ասում է. ,,Ես տեսա մի ուրիշ հրեշտակ, որ ելավ արևելքից և ուներ կենդանի Աստծո կնիքը, և բարձր ձայնով աղաղակեց այն չորս հրեշտակներին, որոնց իշխանություն էր տրված վնասելու երկրին և ծովին: Եվ ասում էր. ,, Վնաս մի տվեք երկրին, ոչ ծովին, ոչ ծառերին, սպասեցեք, մինչև որ կնիք դնեմ իմ Աստծո ծառաների վրա,, / Հայտնություն 7,2,3/: Այս խոսքերը մեկնաբանելիս մենք պետք է զգույշ լինենք, քանի որ Աստված կախման մեջ չէ մարդկանցից: Մենք չենք կարող ասել, որ Աստված պետք է սպասի, մինչև որ բոլորին հավաքի, որոնց կարիքը նա ունի խաղաղության թագավորությունում աշխատանքի համար: Քանի դեռ այդ բազմությունը ամբողջական չէ, Տերը չի կարող գալ: Նա պետք է սպասի, մինչև վերջին հոգին կնքվի և պատրաստ լինի: Չի կարող այլ կերպ լինել, քանի որ դա կնշանակեր, որ Աստված կախման մեջ է մարդկանցից: Ամեն ինչ պատրաստ է, բայց Աստված պետք է սպասի, մինչ մենք ամբողջանա՞նք. . . :

Աստված կախման մեջ չէ մարդկանցից: Տերը կարող էր գալ 20 տարի առաջ և իր հետ վերցներ բոլոր նրանց, ովքեր այն ժամանակ պատրաստ էին, և նա իր պլանը իրականացրած կլիներ: Դա պետք է հասկանալի լինի մեզ:

Մեկ անգամ ևս՝ Աստված մարդկանցից կախման մեջ չի գտնվում: Տերը կարող էր գալ 20 տարի առաջ, 100 տարի առաջ և իր հետ վերցներ բոլոր նրանց, ովքեր այդ ժամանակ պատրաստ էին, այդ դեպքում նրա պլանը լիակատար իրականացված կլիներ: Նրա համար ամեն ինչ կազմ ու պատրաստ է: Ճիշտ չէ, որ նա իր Որդուն դեռ չի ուղարկել, որովհետև նա պետք է սպասի, այլ դա միայն արտահայտությունն է նրա սիրո ու ողորմածության: Նա մեզ նախապատրաստվելու մեկ շանս էլ է տալիս:

Հիսուս Քրիստոսը կարող է գալ ցանկացած ժամանակ – ամեն ինչ պատրաստ է:

Կնքվող ծառաների պատկերի իմաստն այն է, որ մենք պետք է կատարենք մեր աշխատանքը այնքան ժամանակ, ինչքան որ այստեղ ենք: Այսպես ենք հասկանում այս խոսքերը: Հիսուսը կարող է գալ ցանկացած ժամանակ: Աստված կախման մեջ չի գտնվում մարդկանցից: Սակայն, իր սիրով ու ողորմածությամբ՝ մեզ ևս մեկ շանս է տալիս Քրիստոսի գալստյանը նախապատրաստվելու: Եվ նա ուզում է, որ մենք մինչև իր գալուստը փնտրենք այն հոգիները, որոնք կարող են կնքվել: Այսպես ավելի լավ ենք հասկանում այս խոսքերը. ,, Եկեք, քանի որ արդեն պատրաստ է,,: Արի: Հիսուսը

Շրջանային առաքյալ Ռայներ Շթորք
/ Արևմտյան Գերմանիա/

Շրջանային առաքյալ
Ռաուլ Մոնթես դե Օկա

Շրջանային առաքյալ
Էնրիքվե Մինիո

սպասում է քեզ: Նա քո կարիքը չունի, բայց նա սիրում է քեզ: Հիմա արի: Այնպես հիմար մի եղիր, ինչպես առակի հյուրերը:

Մեզ համար առաջնային պետք է լինի Քրիստոսի գալստյանը պատրաստ լինելը, մեզ համար ավելի կարևոր բան չկա: Դա կարող է լինել յուրաքնայչուր օր, յուրաքանչյուր ժամ: Մեկ անգամ ևս՝ ամեն ինչ պատրաստ է, դու կարող ես այն ստանալ, դա քեզ համար հնարավոր է: Անկախ անձնական կարգավիճակներից՝ դու կարող ես այսօր ամեն ինչ ստանալ, ինչի կարիքն ունես, որպեսզի Տիրոջ գալստյանը պատրաստ լինես՝ խոսք, ողորմածություն, խորհուրդներ: Արի, վերցրու դրանք: Սակայն, ,,արի,, բառն այստեղ չի նշանակում միայն գալ ժամերգությունների, լսել խոսքը, քարոզը, ընդունել Սուրբ Հաղորդությունը: ,,Արի,, նշանակում է՝ հետևիր Հիսուսին: Մատթեոսի Ավետարանում առակը լրացնում է հարսանեկան հագուստի մասին պատմությունը / Մատթ. 22,11-14/: Դրա կարիքն ունենք, եթե ուզում ենք Աստծո արքայություն գնալ: Դրա համար էլ ,, արի,, նշանակում է նաև՝ հետևիր Հիսուսին և մտածիր նրա նման, խոսիր նրա նման, գործիր նրա նման: Մեզ համար դա է նշանակում ,, արի,, բառը:

Մենք հրավիրված ենք հավերժ միասին լինելու Աստծո հետ նրա արքայությունում: Այնտեղ՝ երկնքում ամեն ինչ պատրաստ է, Հիսուսը կարող է գալ ցանկացած պահի: Իր սիրով և ողորմածությամբ Աստված մեզ ևս մեկ շանս է տալիս: Այն, ինչը պակասում է մեզ մոտ, այսօր կարող ենք ստանալ առաքելոց ծառայության միջոցով և Սուրբ Հոգու ներգործության շնորհիվ:

Խոսքը նաև նշանակության մեկ այլ հարթություն ունի: Խնջույքը Աստծո հետ միասնության պատկերն է, ոչ միայն ապագայի միասնության, այլ նաև այսօրվա միասնության, որը մենք այստեղ և արդեն այսօր կարող ենք ունենալ:

Ինչը մեզ դեռ պակասում է, մենք այսօր կարող ենք ստանալ առաքելոց ծառայության շնորհիվ:

Հիսուսը այստեղ՝ երկրի վրա միասնության մեջ էր իր աշակերտների հետ խնջույքի ժամանակ, միասին ուտելու և խմելու ժամանակ: Հիսուսը ցանկանում է նաև մեզ հետ այստեղ՝ երկրի վրա միասնության մեջ լինել: Դրա համար էլ կարևոր են այս խոսքերը՝ ,, Եկեք, քանի որ արդեն պատրաստ է,,:

Հիսուսը վստահեցնում է, որ այսօր ամեն ինչ կա իր հետ միասնությունը հնարավոր դարձնելու համար:

վերևում՝ գլխավոր առաքյալ Շնայդերը հանձարարական է տալիս շրջանային առաքյալ Մինիոյին՝ Հարավային Ամերիկայում նոր շրջանային առաքյալի աշխատանքային տարածաշրջանի ղեկավարման հետ կապված
աջ կողմում՝ գլխավոր առաքյալ Շնայդերը հրաժեշտ է տալիս շրջանային առաքյալ Մոնթես դե Օկային՝ ուղարկելով հանգստի։

Այն, ինչ մենք ապրում ենք - փորձություններ, տխրություն, հալածանքներ, վախեր, մեր ուժերից վեր չեն, ինչպես ասում է Պողոսը. ,, Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել,, / Կորնթ. Ա 10,13/։ Նա միշտ հոգ է տանում այն բանի համար, որ մենք ուժ ստանանք, որի կարիքը մենք ունենք, որպեսզի տվյալ իրավիճակից դուրս գանք և նրա հետ կապի մեջ մնանք։ Սակայն, պետք է հասկանալ օգնությունը, և հենց դա է երբեմն դառնում խնդիր։

Հին կտակարանում մի պատմություն կա։ Աբրահամը իր կնոջ՝ Սառայի սպասուհի Հագարից մի երեխա ուներ, իր առաջին որդի Իսմայիլին։ Երբ հետո Սառան լույս աշխարհ բերեց Իսահակին, նա Հագարին իր որդի Իսմայիլի հետ հեռացրեց տնից։ Հագարը մոլորվեց անապատում, եկավ մի պահ, երբ ջուրը վերջացավ։ Նա գիտեր, որ ինքն ու իր որդին անապատում առանց ջրի կմահանային, և նա Իսմայիլին նստեցրեց մի թփի տակ, ինքն էլ նստեց դեմ դիմաց և լաց եղավ։ Այդ ժամանակ Աստված նրա մոտ ուղարկեց մի հրեշտակի, ով բացեց նրա աչքերը, և նա նկատեց մի ջրհոր։ Այդ ջրհորը միշտ էլ այդտեղ էր, բայց նա չէր տեսնում։ Ջրհորը ավազի մեջ ընդամենը մի անցք էր, որը նա չէր տեսել։ Հավանաբար նա այլ ուղղությամբ էր նայում, ես չգիտեմ։ Իրողությունն այն է, որ նա ջուր ունեցավ և դրանով փրկվեց։

Մենք երբեմն գտնվում ենք դժվար իրավիճակներում։ Մենք փնտրում ենք Աստծո օգնությունը և հավանաբար չենք տեսնում նրա օգնությունը, այն չենք ճանաչում։ Մենք մեր անձնական պատկերացումներն ունենք այն մասին, թե ինչ պետք է անի Աստված։ Սակայն, Աստծո համար առաջին տեղում է մեզ իր հետ միասնությունը նվիրելը։ Դա նրա համար առաջնայնություն է։ Նա ուզում է պահպանել այդ միասնությունը։ Նա ուզում է, որ մենք կապի մեջ մնաք իր հետ։ Դա է նրա օգնության նպատակը։ Նա ուզում է մեզ օգնել, բոլոր հարաբերությունների պարագայում նրա հետ կապի մեջ լինել։ Սակայն, մենք չենք տեսնում նրա օգնությունը, որովհետև մենք այլ բան ենք սպասում։ Վստահենք Աստծուն։ Նա հոգ կտանի այն բանի համար, որ մենք ունենանք այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք իր հետ միասնության մեջ մնալու համար՝ խոսքի միջոցով, խորհուրդների միջոցով, սպասավոր եղբայրների միջոցով, մեր քույր-եղբայրների միջոցով։ Աստված հոգ է տանում այն բանի համար, որ յուրաքանչյուրը ստանա այն, ինչն անհրաժեշտ է հավատը պահպանելու համար։

Թույլ տանք մեզ առաջնորդվել Սուրբ Հոգու կողմից, որպեսզի մենք ճանաչենք նրա օգնությունը և կարողանանք նրան ընդունել։ Մեր փրկության համար ամեն ինչ պատրաստ է։

Որպեսզի մեզ կարողանան օգնել, պետք է կատարենք մի շարք նախապայմաններ։ Այս առումով ես մի պատմություն հին ժամանակներից։ Դուք հիշում եք նաև Մովսեսին և Իսրայելի ժողովրդին։ Նրանք անապատում էին և նույնպես այլևս ջուր չունեին։ Ժողովուրդն ըմբոստանում էր Մովսեսի դեմ և ասում.,, Մենք ծարավից կմեռնենք,,/ Մովսես

2-րդ, 17,3/: Աստված հրամայում է Մովսեսին իր ձեռնափայտով հարվածել ժայռին, որից հետո այնտեղից ջուր է բխում:

Մովսեսն իր ձեռնափայտով հարվածում է ժայռին և այնտեղից ջուր է բխում - այնքան շատ, որ բոլորը կարողանում են խմել: Ես կարծում եմ, որ, հավանաբար, ջուրը սկզբում էլ կար այնտեղ, սակայն Մովսեսը պետք է հնազանդ լիներ, միայն այդ դեպքում նա կարող էր օգնել ժողովրդին: Հենց որ Մովսեսը կատարում էր Աստծո կամքը, այն գործում էր: Որպեսզի տեղեկանանք Աստծո օգնության մասին, պետք է լսենք Աստծուն՝ ոչ հրամանից ու պատժից վախենալու իմաստով: Լսելը արտահայտում է Աստծո հանդեպ վերաբերմունքը: Մենք լսում ենք Աստծուն և կատարում նրա կամքը, որովետև մենք նրա հետ միասնություն ենք ցանկանում: Հնազանդ լինել՝ նշանակում է համաձայնել Աստծո կամքի հետ՝ նրա մտքերն իմ մտքերն են, նրա կամքը ես դարձնում եմ իմ կամքը:

Բոլորը, ովքեր հաստատ որոշել են այս ձևով Աստծո հետ կապի մեջ լինել, կիմանան նրա օգնության մասին և նրանից կստանան ամեն ինչ հավատը պահպանելու համար: Դա կախված է Աստծո հետ միասին լինելու մեր վճռականությունից:

Ամեն ին չ պատրաստ է, ամեն ինչ առկա է, ինչի կարիքը դու ունես: Աստծո ողորմածությունը պատրաստ է բոլորի համար:

Չկա ոչինչ, որ Աստված չկարողանա մեզ ներել: Ամեն ինչ պատրաստ է, բայց մենք պետք է գանք:

Մենք պետք է ինքներս մեզ քննենք և ինքներս խոստովանենք, որ մենք սխալներ ենք արել: Դա միշտ չէ, որ հեշտ է:

Բայց մենք պետք է պատրաստ լինենք հասկանալու, որ այո, դա սխալ էր: Մենք պետք է իմանանք, որ մենք դա այլ ձևով կարող էինք անել: Ոչ ոք ինձ չի ստիպել այդ մեղքը գործել, դա իմ որոշումն էր, սխալ որոշում:

Մենք գալիս ենք դեպի Հիսուսը, զղջում ենք, ապաշխարում ենք և ստանում ողորմածություն: Ողորմածությունը պատրաստ է բոլորի համար: Արի: Արի զղջալով, ապաշխարության պատրաստ, արի ուղղված և դու կարժանանաս ողորմածության:

Տեսնում եք, բարի լուրը շատ պարզ է: Աստված հոգում է այն բանի համար, որ առկա լինի այն ամենը, ինչն անհրաժեշտ է նրա արքայություն գնալ կարողանալու համար: Նա հոգ է տանում այն բանի համար, որ մենք ստանանք այն ամենը, ինչն անհրաժեշտ է արդեն այսօր նրա հետ միասնության մեջ մնալու համար: Այն, ինչը մենք պետք է անենք, դա գալն ու վերցնելն է այն, ինչը Աստված մեզ համար պատրաստել է: Ով ձգտում է դրան, կգնա Աստծո արքայություն, նրան դա կհաջողվի: Դա աստվածային խոստում է. ,, Արի, քանի որ արդեն պատրաստ է,,:

Հիմնական մտքեր

Տերը յուրաքանչյուր պահի կարող է նորից գալ: Առաքելոց ծառայության միջոցով Սուրբ Հոգին մեզ տալիս է շնորհներ, որոնք անհրաժեշտ են մեր փրկության համար: Աստված հոգ է տանում այն բանի համար, որ մենք բոլոր իրավիճակներում կարողանանք հավատարիմ մնալ իրեն:

Կալայմիյոյի Լայինգ Սուի համայնքում ժամերգության էր հավաքվել 298 մասնակից

Լուսանկարները՝ Ասիայի հարավ-արևելյան ՆՄԵ

Գանձ, որը հարստացնում է

2019-ի ուշ աշնանը գլխավոր առաքյալը այցելեց Մալայզիայի և Միյանմարի նորառաքելական համայնքներ: Ծրագիրն ընդգրկում էր սպասավոր եղբայրների երկու ժողով, հանդիպում հարավ-արևելյան Ասիայի առաքյալների հետ, երկու համերգ և երեք ժամերգություն: 2019-ի հոկտեմբերի 30-ին, չորեքշաբթի օրը, եկեղեցու ղեկավարը գնաց Կալայմիյո, Միյանմարի ամենարագ աճող արվարձանային քաղաքներից մեկը:

Մի քանի մեկնաբաններ այն կարծիքին կլինեն,- այսպես սկսեց իր քարոզը գլխավոր առաքյալը, -որ ագարակում մատնանշված գանձը խորհրդանշում է մարդու հոգին: Թաքված մեր աչքերից՝ այն կարող է միայն Հիսուսի կողմից տեսանելի դառնալ, ով իր կյանքը տվեց, որպեսզի այն փրկի:,, Սակայն, մեկնաբաններից շատերը կարծում են, որ գանձն ու մարգարիտը ներկայացնում են Քրիստոսով փրկությունը, Աստծո հետ հավիտենական միասնությունը,,: Ըստ այդմ՝ ոմանք փրկության հնարավորություն կունենային, առանց իսկապես այն փնտրելու: Մյուսները ստիպված կլինեին երկար փնտրել այն գտնել կարողանալու համար: ,, Երկու դեպքում էլ սոսկ խորհուրդների ընդունումը բավական չէ Աստծո հետ հավիտենական միասնության հասնելու համար: Մենք պետք է վաճառենք ինչ ունենք, դա նշանակում է, ինքներս մեզ ,, ուրանանք,, - այսպիսին է գլխավոր առաքյալի պարզ մեկնաբանությունը:

Մարդը...

- պետք է մերժի չարն ու չկարողանա ինքնուրույն որոշել, թե ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ,
- պետք է հնազանդվի Աստծո կամքին՝ առանց շրջանցելու այն,
- պետք է նրա պատվիրանները կատարի՝ առանց փորձելու առանձնացնելու նրանք, որոնք իր կամքին համահունչ չեն:

Առաքյալ Սամուել Թանսահթիկնոն, շրջանային առաքյալ Էդի Իսնուգրոհոն, գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը, շրջանային առաքյալի օգնական Դավիդ Դեվարաջը, ինչպես նաև առաքյալ Ֆրեդ Վոլֆը

Վստահել ու մերժել

Կարևոր է Աստծուն վստահելը, թեև մենք միշտ չէ, որ հասկանում ենք նրա գործերը: Հաճախ բավականի դժվար է դրան հասնել:

- ,, Մենք չենք սպասում, որ Աստված մեր ծառայությունների դիմաց վարձատրի: Փրկությունը ողորմածություն է, մենք այն չենք կարող գնել զոհաբերություն մատուցելով: Մենք չենք կարող մեր բարի գործերով այն վաստակել: Մեր մերժումները, մեր զոհաբերությունը և մեր բարի գործերը արտացոլում են այն կարևորությունը, որը մենք տալիս ենք մեր փրկությանը: Դրանք արտահայտում են Աստծո հետ միասնության հասնելու մեր ներքին ցանկությունը,,:
- ,,Մենք մերժում ենք այն պատկերացումը, որ յուրաքանչյուր մեղավոր Աստծո կողմից պետք է պատժվի: Մենք չենք վրդովվում, երբ Աստված սիրում է մեր մերձավորին այնպես, ինչպես մեզ, և նրան արժանացնում նույն ողորմածությանը, որը նվիրել է մեզ: Մենք ներում ենք մյուսներին, ինչպես Աստված է մեզ ներում: Մենք ավելի հաճույքով հրաժարվում ենք մեր տեսակետներից, քան թե վտանգում ենք Աստծո զավակների միությունը,,:

Ոչ թե աղքատ, այլ՝ հարուստ

Նրանով, որ մենք ինքներս մեզ ուրանում ենք, աղքատ չենք դառնում, ասում էր գլխավոր առաքյալը: ,, Ընդհակառակը՝ մենք հարուստ ենք դառնում Քրիստոսով,,: Աստված մեզ առաջարկում է ամենամեծ գանձը – իր հետ հավիտենական միասնությունը:

Հիմնական մտքեր

Մատթեոս 13, 44-46

,,Դարձյալ երկնքի արքայությունը նման է արտի մեջ թաքնված գանձի, որ մի մարդ, գտնելով, նորից թաքցնում է, և ուրախությունից գնում վաճառում է իր ամբողջ ունեցածը և այդ արտը գնում է,,:

Աստված մեզ առաջարկում է ամենամեծ գանձը՝ իր հետ հավիտենական միասնությունը: Որպեսզի փրկվենք, մենք թողնում ենք մեր հպարտությունը և հնազանդվում ենք Աստծո կամքին: Մենք մերժում ենք Աստծո գործերը հասկանալ ուզենալը, մեր բարի գործերի համար վարձատրվելը և մեղավորի համար պատիժ պահանջելը:

ՊԵՏՐՈՍՆ ՈՒՐԱՆՈՒՄ Է ՀԻՍՈՒՍԻՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 22,24-62-Ի

Երբ Հիսուսն իր աշակերտների հետ Զատկի տոնի գառն էր ուտում, նրանց ասաց, որ աշակերտներից մեկը դավաճանելու է իրեն: Աշակերտները հարցրեցին իրար, թե դա ով կլինի: Վեճ սկսվեց այն մասին, թե ով է իրենցից ամենամեծը: Հիսուսն ասաց Տասներկուսին, որ նրանք պետք է ծառայեն միմյանց:

Հիսուսն ասաց Պետրոսին. ,, Ահա սատանան ուզեց ձեզ ցորենի նման մաղել: Բայց ես աղոթեցի քեզ համար, որպեսզի քո հավատը չպակասի, և դու, երբ վերադառնաս ինձ, հաստատես քո եղբայրներին,,: Պետրոսը պատասխանեց նրան. ,, Տեր, պատրաստ եմ քեզ հետ գնալ և բանտ, և դեպի մահ,,: Ապա Հիսուսն ասաց. ,, Պետրոս, այսօր դեռ աքաղաղը կանչած չպիտի լինի, մինչև որ դու երեք անգամ ուրանաս՝ ասելով, թե ինձ չես ճանաչում,,: Զատկական ճաշից հետո Հիսուսը գնաց Ձիթենյաց լեռան մոտ գտնվող Գեթսեմանի այգին, աշակերտները հետևեցին նրան: Նա մի քիչ հեռացավ նրանցից, որպեսզի աղոթի: Աշակերտները ևս պետք է աղոթեն, որպեսզի չտկարանան: Հիսուսը խնդրում է. ,,Հայր, եթե կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրու, բայց ոչ թե իմ կամքը, այլ քոնը թող լինի,,: Հրեշտակը գալիս է և ուժ է տալիս նրան: Հիսուսը ավելի եռանդուն է աղոթում: Նա պայքարում է մահվան դեմ: Նրա քրտինքը հոսում է արյան կաթիլների նման՝ թափվելով գետնին: Եվ վեր կենալով աղոթքից՝ եկավ աշակերտների մոտ, նրանց քնած գտավ տրտմությունից: Հիսուսը արթնացրեց նրանց, նրանք պետք է աղոթեին: Այդ ընթացքում Հուդան, Տասներկուսից մեկը, Հիսուսի

հակառակորդներին առաջնորդում էր դեպի այգին: Հիսուսը ձերբակալվում է և տարվում քահանայապետի տուն: Պետրոսը հետևում է նրան հեռվից:
Տան գավիթի մեջ մարդիկ տաքանում էին կրակի շուրջը, Պետրոսը նստեց նրանց մոտ: Մի աղախին հայացքը սևեռում է նրան և ասում.,, Սա էլ էր նրանցից, որ նրա հետ էին,,:
Պետրոսը ուրանում է և ասում.,, ԿԻՆ, ես նրան չեմ ճանաչում,,:
Եվ քիչ հետո մեկ ուրիշն է տեսնում նրան և ասում.,, Դու էլ նրանցից ես,,:
Պետրոսը նորից է ընդդիմանում. ,,Ով մարդ, ես նրանցից չեմ,,:
Եվ երբ մի ժամ էլ է անցնում, մեկ ուրիշը վիճում է և ասում.,, Ճիշտ որ սա էլ նրա հետ էր, որովհետև գալիլացի է,,:
Պետրոսն ուրանում է երրորդ անգամ. ,, Ով մարդ, չգիտեմ այդ ինչ ես խոսում,,:
Եվ նույն պահին, ինչ նա այս ասում էր, աքաղաղը կանչում է: Հիսուսը շրջվում է դեպի Պետրոսը և նայում նրան:
Պետրոսը հիշում է Տիրոջ խոսքը, որ ասել էր իրեն.,, Դեռ աքաղաղը չկանչած՝ երեք անգամ պիտի ուրանաս, թե ինձ չես ճանաչում,,:
Եվ Պետրոսը դուրս ելնելով՝ դառնորեն լաց եղավ:



Աղբյուրը՝ Մենք՝ երեխաներս, ամսագիր, հրատարակություն 04/2020; ձևավորումը՝ Միրելա Ֆորսունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԱՅԻՆ՝ ՕՍԼՈՅՈՒՄ / ՆՈՐՎԵԳԻԱ /

Իմ անունը Լինա է, ես ինը տարեկան եմ: Իմ ծնողների և իմ փոքր եղբայր Էլիելի հետ ես ապրում եմ Օսլոյում: Իմ հայրն ու մայրը եկել են Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունից, սակայն իմ եղբայրն ու ես ծնվել ենք Օսլոյում:

Մենք մի քանի անգամ եղել ենք Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում: Այնտեղ խսում են ֆրանսերեն, ես խոսում եմ ինչպես ֆրանսերեն, այնպես էլ՝ նորվեգերեն: Ճանապարհորդությունն ինքնաթիռով տևում է 14 ժամ՝ կարճ դադարով Փարիզում:

Օսլոն Նորվեգիայի մայրաքաղաքն է: Զբոսաշրջիկներն այստեղ ամենից առաջ այցելում են պալատ, որտեղ ապրում է թագավորական ընտանիքը և Ակերշուս ամրոցը, որին պատկանում են մեկ պալատ, թանգարաններ և ազատ ժամանցի պուրակը: Ամրոցն ու պալատը դասկվում են թագավորական գվարդիայի կողմից:

Թագավորական գվարդիան ունի մի ոչ սովորական անդամ՝ Սըր Նիլս Օլավ 3-րդը: Նա ապրում է Շոտլանդիայում, Էդինբուրգի կենդանաբանական այգում: 1913 թվականին, կենդանաբանական այգու բացման առիթով Նորվեգիան կենդանաբանական այգուն էր նվիրել մի թագավորական պինգվին: 1972 թվականից նորվեգական գվարդիան մասնակցում է զինվորական երաժշտական փառատոնին, որը կանոնավորապես տեղի է ունենում Էդինբուրգում: Այն ժամանակ, առաջին անգամ, գվարդիայում պինգվինը որպես թալիսման է ընդունվել: Յուրաքանչյուր փառատոնի ժամանակ պինգվինը կամ նրա հետնորդը պարգևատրվում է նոր պատվավոր կոչումով: 2016-ին Նիլս Օլավը ստացել է բրիգադի գեներալի կոչում:

Իմ ազատ ժամանակը ես անց եմ կացնում իմ ընտանիքի և իմ ամենալավ ընկերուհիների հետ: Մենք սիրում ենք լուսանկարել մեզ և այդ լուսանկարները զվարճալի ձևերով ձևավորել:

Հայրիկիս հետ երբեմն խաղում եմ ֆուտբոլ: Առաջ մենք միասին նաև բադմինտոն էինք խաղում: Դա ինձ շատ էր դուր գալիս, և ես հույս ունեմ, որ շուտով մենք նորից կխաղանք: Ես սիրում եմ սպորտը, դպրոցում ես ձեռքի գնդակի թիմում եմ հանդես գալիս: Դա շատ արտակարգ է, քանի որ ես կարողանում եմ իմ ընկերների հետ լինել և նրանց հետ զվարճալի բաներ անել: Մեր ազատ ժամանակ մենք հաճախ ենք գնում դպրոցի բակը: Բայց, ես նաև հաճույքով եմ սովորում, իմ սիրելի առարկան նորվեգերենն է:

Ինչ վերաբերում է սննդին, ապա իմ սիրած ուտելիքներն են լազանիան և տակոն:

Իմ ընտանիքը և ես պատկանում ենք Օսլոյի համայնքին: Ես իմ եղբոր հետ հաճախում եմ կիրակնօրյա դպրոց: Ինձ այնտեղ ամենաշատը դուր է գալիս այն, որ յուրաքանչյուրը պետք է ինչ-որ սիրալիր բան ասի, և մենք միմյանց հետ հաճելի ժամանակ ենք անցկացնում:



Ձմեռը Նորվեգիայում բավականին երկար է տևում և բավականին ցուրտ է, երբեմն ձյուն է գալիս արդեն հոկտեմբերից և տևում է մինչև մայիս: Դրա համար էլ ես ուրախանում եմ, որ օրերը շուտով նորից են տաքանալու:

Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 04/2020, լուսանկարները՝ մասավոր, Մարկ Օլենս / wikimedia.commons, vitals - stock.adobe.com,



Լուսանկարը՝ ©Jonathan - stock.adobe.com

Մարդկային կյանքի սկիզբը

Հակաբեղմնավորիչ միջոցներ և օրգանների նվիրատվություն, երեխաներ ունենալու ցանկություն և Էֆթանազիա՝ կյանքի և մահվան հարցը անմիջական է ու շատ անձնական: Հավատացյալներին իրենց անձնական պատասխանատվության որոշմանը կողմնորոշում տալու համար, հնագամանքը նորառաքելական հավատքի տեսանկյունով լուսաբանում է ,, Մարդկային կյանքի սկիզբն ու ավարտը,, պաշտոնական մշակումը:

Մարդկային կյանքի սկիզբը կարող է նկարագրվել տարբեր տեսանկյուններից ելնելով:

- Կենսաբանական տեսանկյունը հիմնվում է բնագիտական գիտելիքների վրա:
- Էթիկական կամ բարոյագիտական տեսանկյունը կախված է տվյալ հասարակության հիմնարար արժեքներից ու վարքականոնից, որոնց համատեքստում էլ ձևավորվում է էթիկան / օրինակ՝ աստվածաբանական էթիկա կամ բժշկական էթիկա/:
- Քրիստոնեական հավատի տեսանկյան համար չափորոշիչներ են Աստվածաշնչի ու Ավետարանի վկայությունները:

Կենսաբանական տեսանկյուն

Կենսաբանական տեսանկյունով մարդու սկիզբը ձվաբջիջների բեղմնավորումն է: Ձվաբջջի և սերմնաբջջի միավորումից սկսած՝ սաղմում ընթանում է հաջորդական զարգացումը, որը էականորեն որոշված է ժառանգական գործոնով: Փուլերի հայտնի բաժանումը, ընդհանուր առմամբ, նկարագրությունն է տեսանելիի: Ձվաբջջի բեղմնավորման և արգանդում սաղմի լիակատար տեղակայման միջև ընկած ժամանակահատվածը մոտ յոթ օր է, որը պետք է քննության առնվի հակաբեղմնավորիչ միջոցների և կենսաբժշկական մեթոդների կիրառման դեպքում, օրինակ, արհեստական բեղմնավորման շրջանակում:

Զարգացման յուրաքանչյուր փուլում մահանում է սկզբից առկա սաղմերի մի մասը, քանի որ դրանք կամ սխալ են կամ բացակայում են նրանց համար շրջակա միջավայրի բարենպաստ պայմանները: Մահացող սաղմերի բաժինը հատկապես մեծ է արգանդում տեղակայվելուց առաջ: Այդտեղից էլ այսօր եզրակացնում են, որ բոլոր սաղմերի կեսից ավելին բնականից մահանում են:

Բարոյագիտական տեսանկյուն

Էթիկան կամ բարոյագիտությունը զբաղվում է արժեքներով ու պատասխանատվությամբ և ռացիոնալ կերպով հետազոտում է, թե ինչն է լավը կամ բարոյականը: Կենսաբժշկական ոլորտում բարոյագիտական խորհրդածությունները հաճախ հիմք են հանդիսանում օրենսդրական կարգավորումների համար:

Մասնավորապես, մարդկային կյանքի սկզբնավորմամբ մի կողմից զբաղվում է կրոնական բարոյագիտությունը, որը ելնում է աստվածաբանական ճշմարտություններից և փորձում է ընդունված մասշտաբներով մշակումներ անել, մյուս կողմից՝ բժշկական բարոյագիտությունը, որը համարվում է պրակտիկ բարոյագիտության մի մասը: Այն ուզում է բարոյապես հիմնավորված դիրքորոշումներ և պատասխաններ տալ անհատական հարցերին, որոնք առաջանում են մարդկային կյանքի սկզբնավորմանը և պահպանմանը այսօր հնարավոր միջամտությունների պատճառով:

Մեր հավատքից բխող տեսանկյունը

Մեր հավատքից բխող տեսանկյունով մարդկային կյանքի սկիզբը սերտ կապված է մարմնի և հոգու միավորման հետ, իսկ մարդկային կյանքի վերջը՝ մարմնի և հոգու բաժանման հետ: Աստվածաշնչում վկայություններ չկան հոգով լցվելու ժամանակի ու ընթացքի վերաբերյալ՝ որպես ուսուցման հիմք:

Հոգով լցվելու վերաբերյալ փիլիսոփայական և աստվածաբանական վեճերը հասնում են մինչև նախաքրիստոնեական ժամանակաշրջան: Հոգով լցվելը հասկանալու և հոգով լցվելու ժամանակի ու ձևի մասին մտքերը կախված են տվյալ ժամանակի պատկերացումներից և այն գիտելիքներից, թե ինչպես է լինում բեղմնավորումն ու զարգացումը արգանդում: Դրա համար էլ դարերի ընթացքում շատ տարբեր պատկերացումներ են եղել:

Հոգով լցվել – հասկացության պատմությունը

Հոգով լցվելու մասին վաղ շրջանի վկայությունները գալիս են հունական փիլիսոփայությունից/Պլատոն /, որտեղ ,, հոգի,, հասկացությունը բնորոշում էր որպես մի բան, որը կազմավորում է մարդկային մարմինը և տալիս է նրան կյանք ու շարժում, իսկ մահվան ժամանակ բաժանվում է մարմնից:

Արիստոտելը չէր ելնում հոգու անմահությունից, այլ նրա մեջ տեսնում էր մարմնի հետ կազմավորվող և ապրող սկզբունքը, որը մահով նորից ավարտվում է: Միայն այն, ինչ մարդը կիրթ ձևով ստեղծել է, որպես ոգի մնում է անմահ: Նա ելնում է մարմնի զարգացմանը զուգահեռ հոգու զարգացման տարբեր աստիճաններից: Նրա համար հոգով լցվելը սկսվում է ,, սնուցող բուսական հոգով,, բեղմնավորման ժամանակ, որին հաջորդում է ,, կենդանական, զգացողություններ ընդունող հոգին,,; իսկ ծննդից սկսած՝ ,, մտածող, գիտակցություն ունեցող հոգին,,: Հոգով լցվելու այս իրար հաջորդող աստիճանները անվանում են հոգու հաջորդական լիցք:

Քրիստոնեական ավանդույթը միանշանակ հոգին համարում է որպես զուտ մաքուր հոգևոր բան: Հոգով լցվելու ձևն ու ժամանակը նկարագրվում են շատ տարբեր: Օգոստոսինոսը թողնում է



Լուսանկարը՝ ©creedline - stock.adobe.com

բաց այն հարցը, թե արդյոք հոգին դուրս է գալիս Ադամի հոգուց և բեղմնավորման ժամանակ փոխանցվում ծնողներից, կամ թե արդյոք այն տվյալ ժամանակ նորովի է ստեղծվում Աստծո կողմից: /Արարչագործություն/:

Թովմաս ֆոն Աքվինը ելնում էր նրանից, որ հոգին որպես ամենակարևոր բան, մարդկանց չի փոխանցվում մարդու միջոցով, այլ նորովի է արարվում Աստծո կողմից այն ժամանակ, երբ մարմինը կազմավորված է: Հարելով Արիստոտելի մտքերին՝ Թովմաս ֆոն Աքվինը հոգին ընդունում է որպես զարգացում, որը, այնուամենայնիվ, արդեն ավելի վաղ / 40-90 օր հետո/ ավարտված է լինում: Հոգու ամենաբարձր աստիճանը՝ բանական հոգին, ստեղծվում է Աստծո կողմից և լցվում մարդկային մարմին:

Ուշ անտիկ շրջանում և միջնադարում հիմնականում ենթադրում էին, որ հոգով լցվելը ավելի վաղ է տեղի ունենում: Զարգացող կենսաբանական և, հատկապես, գենետիկական գիտելիքները հանգեցնում էին նրան, որ նոր մարդկային կյանքի սկզբի ժամանակն ու դրանից ածանցված հոգով լցվելը էլ ավելի վաղ ընդունեն:

Տեսանկյունների կարևորության մասին

Հնադարից մինչև լուսավորության դարաշրջան արևմտյան հասարակության մեջ եկեղեցին կյանքի ձևավորման հարցերում ունեցել է մեկնաբանման ընդգրկուն իշխանություն: Լուսավորության և բժշկական առաջընթացի շնորհիվ նոր ժամանակներում բարոյագիտությունը և ,հատկապես, բժշկությունը մեծ նշանակություն ունեն: Կենսաբժշկական ոլորտում հասարակական նորմերը այսօր, ընդհանուր առմամբ, ձևավորվում են տեխնիկապես իրագործելի լինելու շնորհիվ: Բժշկական ոլորտում եկեղեցու մեկնաբանման ուժը հենց ակտիվ քրիստոնյաներով է ակնառու դառնում: Իրենց տեղը զբաղեցրել են հասարակական միտումներն ու բարոյագիտական նկատառումները:

Այսօրվա իրարից տարբերվող հասարակական նորմերի և առանձին պետությունների խիստ տարբերվող օրենքների պատճառով, կենսաբժշկական ոլորտում սկզբունքային վկայությունները առօրյայում միայն դեռ սահմանափակ են կիրառելի: Այստեղ պետք է ավելի շատ էթիկական կոմիտեի կողմից կամ անձնական պատասխանատվությամբ որոշվի:

Մեր եկեղեցու տեսանկյունով այդ անձնական պատասխանատվությունը կամայական չէ, այլ կապված է հիմքում ընկած մտադրության քննադատական քննության հետ:

Տեսակետների լարվածության դաշտում

Մարդկային կյանքի սկզբի մասին տարբեր տեսակետները միմյանց հետ կապելը առաջացնում է լարվածության դաշտեր:

Բարոյագիտական տեսանկյան հիման վրա հասարակական կարգավորումները միայն մասամբ են նույնականացվում քրիստոնեական արժեքների հետ: Նաև ընդունվում են կամ անգամ մերժվում, սակայն անպատիժ են մնում մեթոդներ, որոնք հակառակ են քրիստոնեական արժեքներին: Անպատժելիության դեպքում առաջնային այն տպավորությունն է առաջանում, որ դա թույլատրելի է:

Եթե եկեղեցական տեսանկյունից էական նշանակություն ունեցող մարդկային հոգով լցվելը զուգորդվեր ձվաբջիջի և սերմնաբջիջի կենսաբանական, ապացուցելի միության հետ, բնական վերարտադրության ընթացքում սաղմերի հայտնի մահվան պատճառով հոգով լցված մարդկանց զգալի մասը կմահանար՝ առանց ծնվելու:

Հոգով լցված մարդկանց գերակշռող մասը կմահանար՝ առանց ծնողների կողմից ինչ-որ բան նկատելու:

Եկեղեցական տեսանկյունով չի կարող միանշանակ ամրագրվել, թե երբ հաջողությամբ կիրականացվի հոգով լցվելը: Կարևորն այն է, որ սկզբունքորեն մարդկային կյանքը մարդկային որոշումների կամ մարդկային գործունեության պատճառով զարգացման արգելակում չունենա կամ չսպանվի՝ անկախ տվյալ ժամանակի օրենքներից: Այս մտքերի հիման վրա եկեղեցին ներկայացնում է հանձնարարականներ կենսաբժշկական բնագավառում, որոնք հավատացյալներին կողմնորոշում են տալիս հիմնավորված, բայց ի վերջո անձնական պատասխանատվությամբ որոշման ժամանակ: Քանի որ հոգով լցվելու ժամանակը անհայտ է, չի կարելի եզրակացնել, որ յուրաքանչյուր բեղմնավորված բջիջի /սաղմի/ մահով նաև հոգին է գնում անդրշիրիմյան աշխարհ:

Հոգով լցվելու ձևը ի վերջո անհայտ է, և այն Աստծո ձեռքերում է: Քանի որ այն հավատացյալի առօրյայի համար ոչ մի պրակտիկ հետևանք չի ունենում, այստեղ եկեղեցին որևէ վերաբերմունք չի արտահայտում:

Նորառաքելական եկեղեցու դիրորոշումը կյանքի և հոգով լցվելու սկզբի վերաբերյալ

- Որպեսզի հնարավորինս պաշտպանեն մարդուն՝ որպես Աստծո նմանությամբ ստեղծվածի, եկեղեցին հարգում է մարդկային կյանքը բեղմնավորման պահից սկսած և մերժում է այդ կյանքի սպանումը: Այդ կյանքը բերում է անսահմանափակ մարդկային արժեքներ:
- Թե երբ է տեղի ունենում հոգով լցվելը, դա գտնվում է Աստծո ձեռքերում, և մարդկային տեսանկյունից հստակորեն ամրագրված չէ: Բոլոր դեպքերում, եկեղեցին հոգով լցված մարդկային կյանքի հնարավորինս պաշտպանության համար ելնում է այն բանից, որ հոգով լցվելը տեղի է ունենում սերմնաբջիջի և ձվաբջիջի միաձուլման ժամանակ:
- Եկեղեցին ընդունում է այն կենսաբժշկական մեթոդներն ու գործունեությունները, որոնց շնորհիվ ոչ մի բեղմնավորված բջիջ չի ոչնչանում / ոչ մի մարդկային ընտրություն/:
- Եկեղեցին գիտի, որ կա բնական, կենսաբանական ընտրություն, երբ ոչ քիչ քանակությամբ բեղմնավորված բջիջներ / սաղմեր/ առանց մարդկային միջամտության են մահանում:
- Մեր եկեղեցու դիրքորոշման համաձայն գործելը կարող է սահմանափակումների տանել այն բանի, ինչը բժշկորեն կիրառելի է: Այդ սահմանափակումները պետք է Աստծոն վստահելու վրա ընդունվեն, որովհետև մարդկային կյանքը Աստծուց է տրված և հիմնականում պետք է հարգել:

„Մարդկային կյանքի ավարտով„ ամփոփվում է մշակման երկրորդ մասը, որը կհապարակվի եկեղեցու „community“ ամսագրի հաջորդ հրատարակությունում:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսթրասսե 243, 80514 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

New Apostolic Church
International